ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվարի 2017 թվականի N 19_Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2017 թվականի փետրվարի 2-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին» N 62-Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2016թ. փետրվարի 1-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N8-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի Կապանի, Գորիսի, Սիսիանի, Մեղրիի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 68-2.3-(34-37), 68-3.2-(38-42), 68-4.1-(24-27), 68-4.3-(21-33)) անձնագրերի 10-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն և ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ», սոցիալական դեպքի վարման, սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց տվյալների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման, համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգերով աշխատելու կարողություններ.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2017թ. Փետրվարի 06
ք. Կապան